ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի N 137 Ա ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 160 Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 13-րդ մասի և ՀՀ վարչապետի 2023 թվականի հունվարի 26-ի N 86-Ա որոշման պահանջներին համապատասխան ՀՀ կենտրոնական բանկը (այսուհետ՝ Բանկ) ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել Բանկի խորհրդի 2023 թվականի օգոստոսի 25-ի N 137 Ա և 2023 թվականի սեպտեմբերի 22-ի N 160 Ա որոշումներով հաստատված Բանկի 2024 թվականի վարչական ծախսերի նախահաշիվը և կապիտալ ներդրումների ծրագիրը՝ ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի նախագծում ներառելու նպատակով:

Ստորև ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2024 թվականի վարչական ծախսերի նախահաշվի և կապիտալ ներդրումների ծրագրի վերաբերյալ՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ժբ2» կետի պահանջի համաձայն:

Ա. Վարչական ծախսերի նախահաշվի նախագծով նախատեսված ծախսերի վերաբերյալ

Նախատեսվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետի.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն), 2024 թվականին Բանկի վարչական ծախսերի նախահաշվով ընդամենը ծախսերը կազմում են շուրջ 10,261.1 մլն դրամ, որը 2023 թվականի համար «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված համապատասխան ցուցանիշից ավելի է 2%-ով կամ շուրջ 168.9 մլն դրամով: Վարչական ծախսերի նախահաշվով նախատեսված են հետևյալ ծախսերը՝

1. Ապարատի պահպանման ծախսեր.

Վարչական ծախսերում գերակշիռ մաս են կազմում Բանկի ապարատի պահպանման ծախսերը՝ ծրագրվող ընդամենը վարչական ծախսերի 98%-ը:

Ապարատի պահպանման ծախսերն ընդգրկում են Բանկի անձնակազմի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, անձնակազմի ուսուցման, վերապատրաստման և գործուղման, ներկայացուցչական, սոցիալական ապահովության, ինչպես նաև ծառայողական փոխադրամիջոցների շահագործման ծախսերը: 2024 թվականի ապարատի պահպանման ծախսերի նախահաշիվը կազմում է 10,079.2 մլն դրամ, որը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից ավելի է 2%-ով կամ 181.2 մլն դրամով:

1.1. Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ.

Ընդհանուր առմամբ, Բանկի պահպանման ծախսերում աշխատանքի վարձատրության համար անհրաժեշտ միջոցների հաշվարկի համար հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետի պահանջը, համաձայն որի Բանկի վարչական ծախսերով անհրաժեշտ է ապահովել միջազգային կազմակերպություններում պատշաճ ներկայացուցչություն ապահովելու և Բանկի առջև դրված նպատակներն ու գործառնություններն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորում ունեցող աշխատակիցներին Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում վարձատրության միջին չափին համապատասխան աշխատավարձ վճարելու հնարավորությունը: 2024 թվականի համար առևտրային բանկերը կանխատեսել են 1,102.0 հազար դրամ միջին աշխատավարձ: Այդուհանդերձ, Բանկը

նախատեսում է 2024 թվականի համար պահպանել նախորդ տարվա միջին աշխատավարձի մակարդակը (915.0 հազար դրամ)՝ միաժամանակ պահպանելով նաև աշխատողների թվաքանակը (800 հաստիք), բանկային համակարգի և Բանկի միջին աշխատավարձերի միջև ճեղքվածքի ծածկման հարցը տեղափոխելով գալիք բյուջետային տարի:

Ապարատի պահպանման ծախսերում «Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ» հոդվածի գծով 2024 թվականի ծախսը նախատեսվում է 2023 թվականի չափով՝ 8,787.4 մլն դրամ: Աշխատանքի վարձատրության գծով նախատեսվող գումարը ապարատի պահպանման ծախսերում կազմում է շուրջ 87.2%:

1.2. Աշխատակիցների սոցիալական ապահովություն.

Աշխատակիցների սոցիալական ապահովության ծախսերի հոդվածը նախատեսված է Բանկի անձնակազմի սոցիալական փաթեթի, այդ թվում՝ առողջության ապահովագրության ծախսերն իրականացնելու համար: Այս հոդվածի գծով 2024 թվականի նախահաշիվը կազմում է 531.9 մլն դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ 8%-ով կամ շուրջ 39.6 մլն դրամով ավելի: Ծախսերի աճը առավելապես պայմանավորված է Բանկի աշխատակիցների հոսունության ցուցանիշի ուժգնացող աճի հետ (վերջին տարիներին հոսունության ցուցանիշը հասնում է 13%-ի): Այդ կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում սոցիալական ապահովության փաթեթի տրամադրման ծախս նախատեսել նաև նոր ընդունվող աշխատողների համար:

1.3. Անձնակազմի գործուղում, ուսուցում և վերապատրաստում.

Այս հոդվածի ներքո պլանավորվում են տարբեր միջազգային կառույցներում և ՀՀ տարածքում Բանկի անձնակազմի վերապատրաստման և զարգացման ծախսեր, ինչպես նաև աշխատանքային այցերի և այլ շրջանակներում իրականացվող գործուղումներ: 2024 թվականի նախահաշվով նախատեսվում է շուրջ 660.4 մլն դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ 33%-ով կամ շուրջ 162.6 մլն դրամով ավելի:

Աճը պայմանավորված է ռազմավարական նպատակների իրականացման ճանապարհային քարտեզի ներքո նախագծային գործուղումներ իրականացնելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև նոր ընդունվող աշխատակիցների ուսուցման և վերապատրաստման անհրաժեշտությամբ, հաշվի են առնվել նաև ավիափոխադրման և կեցության ծախսերի արդի թանկացումները:

1.4. Ներկայացուցչական ծախսեր.

Բանկի 2024 թվականի ներկայացուցչական ծախսերը ծրագրվել են 54.8 մլն դրամի չափով՝ 2023 թվականի նույն ցուցանիշին համապատասխան: Ծախսը նախատեվում է մի շարք միջազգային պատվիրակությունների ընդունելություններ, օտարերկրյա բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ աշխատանքային հարցերի շուրջ քննարկումների և բանակցությունների, գիտաժողովների, աշխատաժողովների կազմակերպման շրջանակներում:

1.5. Ծառայողական փոխադրամիջոցների շահագործում.

Ծառայողական փոխադրամիջոցների շահագործման գծով 2024 թվականի ծախսերը նախատեսվել են 44.7 մլն դրամի չափով, որը նախորդ տարվա նկատմամբ պակաս է 32%-ով կամ շուրջ 21.0 մլն դրամով: Ծառայողական փոխադրամիջոցների շահագործման ծախսերի հաշվարկները կատարվել են թվով 29 ավտոմեքենայի համար՝ նախորդ տարվա 30-ի փոխարեն: Բացի այդ, ծախսերի կրճատումը պայմանավորված է հիմնականում Բանկի կողմից շահագործվող ավտոպարկի աստիճանական թարմացման և հին մեքենաները նոր էլեկտրական շարժիչով ավտոմեքենաներով փոխարինելու հանգամանքով, ինչի արդյունքում ակնկալվում է նաև տրանսպորտային միջոցների ընթացիկ պահպանման հետ կապված ծախսերի կրճատում:

2. Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսեր.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին օրենքի 13-րդ հոդվածի՝ վարչական ծախսերում ընդգրկվում են «Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսեր» հոդվածի գծով ծախսերը: Նշված հոդվածի գծով ծախսերը 2024 թվականին կկազմեն 51.4 մլն դրամ, որը 2023 թվականի համապատասխան ցուցանիշից պակաս է 7%-ով կամ 4.1 մլն դրամով:

Տեղեկատվության համաձայն, Բանկում կայացած մասնագիտական քննարկման արդյունքում որոշվել է, որ հասարակայնության հետ կապված ծախսերը, ֆիլմի և տեսահոլովակի նկարահանման, ինչպես նաև հայտարարությունների հրապարակման ծախսերը չեն կարող որակվել որպես վարչական ծախս: 2023 թվականին այս ծախսերի գծով պլանավորված գումարը կազմել է 24.0 մլն դրամ, որը չի նախատեսվել 2024 թվականի նախահաշվով: 2024 թվականին մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսերը ավելացվել են շուրջ 20.0 մլն դրամով՝ պարբերականների առավել լայն փաթեթով բաժանորդագրության ձեռքբերման, ինչպես նաև ՀԼՄ-ների անդրադարձների,

վերլուծական բնույթի տարբեր հոդվածների, տեսանյութերի և ԿԲ-ին առնչվող տեղեկատվության մոնիտորինգի, թվային տվյալների ամփոփման և պրես կլիպինգի առավել առաջադեմ գործիքների կիրառմամբ ծառայություններ ձեռք բերելու նպատակով:

3. Տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված ծախսեր.

Բանկի վարչական շենքի և Բանկին պատկանող մյուս տարածքային կառույցների բնականոն աշխատանքային վիճակի ապահովման համար անհրաժեշտ տնտեսական ապրանքների և նյութերի ձեռքբերման հետ կապված ծախսերը 2024 թվականին նախատեսվում են 86.7 մլն դրամի չափով, որը 2023 թվականի համար նախատեսված համապատասխան ցուցանիշից պակաս է 9%-ով կամ 8.6 մլն դրամով:

4. Ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսեր.

Այս հոդվածի ներքո հաշվառվում են աբոնենտային վարձը, խոսակցությունների վճարները, շենքերի պահպանության համար ուղիղ կապը: 2024 թվականի ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսերը նախատեսվում են 23.8 մլն դրամի չափով, որը 2023 թվականի համապատասխան ցուցանիշից ավելի է 2%-ով կամ 0.35 մլն դրամով:

Չնախատեսված ծախսեր.

Նախահաշվում ընդամենը վարչական ծախսերի 0.2%-ի չափով նախատեսված է 20.0 մլն դրամ չնախատեսված ծախսերի համար (2023 թվականի չափով):

Բ. Կապիտալ ներդրումների ծրագրի նախագծով նախատեսված ծախսերի վերաբերյալ

Նախատեսվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի.

Բանկի կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակը 2024 թվականի համար Բանկի կողմից առաջարկվում է սահմանել 3,671.7 մլն դրամ, որը 2023 թվականի նույն ցուցանիշից ավելի է շուրջ 1,760.0 մլն դրամով կամ 92%-ով:

5. Կապիտալ ներդրումներ Կենտրոնական բանկի խնդիրների հետ ուղղակիորեն առնչվող իրավաբանական անձանց կապիտալում.

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» ենթակետի համաձայն, 2024 թվականին Բանկը նախատեսում է 755.0 մլն դրամի չափով ներդրում կատարել «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում: Ներդրման նպատակն է Արքա համակարգի հաճախորդներին ապահովել թվային լուծումների հիման վրա հարմարավետ և անվտանգ ծառայությունների մատուցում, վճարումների թափանցիկության և տվյալների արդյունավետ օգտագործման ապահովում, գործընկեր ֆինանսական կազմակերպություններին և վճարային ծառայությունների հետ առնչվող այլ կազմակերպություններին բիզնես խնդիրների լուծումների առաջարկում, ինչպես նաև ծառայությունների մատուցման հուսալիության և հասանելիության ապահովման շարունակական բարձրացում, այդ թվում՝ պահուստային ռեսուրսների ստեղծման ճանապարհով: Նախատեսվում են նաև ծախսեր ուղղված ընկերության կառավարման համակարգի բարեփոխումներին:

2023 թվականի համար այսպիսի ներդրում նախատեսված չի եղել:

6. Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում.

Բանկի կողմից հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերմանն ուղղված ներդրումների 2024 թվականի ծրագրով նախատեսվում է 2,916.7 մլն դրամ, որը կազմում է Կապիտալ ներդրումների ընդհանուր ծրագրի 79.4%-ը և նախորդ տարվա նույն ցուցանիշից ավելի է 53%-ով կամ շուրջ 1,005.0 մլն դրամով:

6.1. «Աշխատանքային շենքերի և շինությունների կառուցում, ձեռքբերում և կապիտալ վերանորոգում».

Այս նպատակով 2024 թվականին նախատեսվում է հատկացնել 733.3 մլն դրամ, որը 2023 թվականի նույն ցուցանիշից ավելի է 188%-ով կամ շուրջ 478.3 մլն դրամով: 2024 թվականին նախատեսվում է իրականացնել մի շարք կապիտալ հիմնանորոգման աշխատանքներ, այդ թվում՝ սերվերային տարածքների և դրանց աշխատանքն ապահովող հովացման, էլեկտրասնուցման և հրդեհաշիջման համակարգերի կապիտալ վերանորոգման համար նախատեսվում է հատկացնել 468.3 մլն դրամ, Բանկի աշխատանքային շենքերի տանիքներին արևային պանելների կառուցման համար՝ 80.0 մլն դրամ, վարչական շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների համար՝ 185.0 մլն դրամ:

Կապիտալ վերանորոգման աշխատանքների ֆինանսական գնահատումն իրականացվել է շինարարական հաշվարկների իրականացման համար կիրառվող մեթոդաբանության և շուկայական ուսումնասիրության արդյունքում գնային հաշվարկների

գնահատականների հիման վրա: Նախատեսված աշխատանքները կմեկնարկեն համապատասխան մրցութային ընթացակարգերի կազմակերպմամբ գործող օրենսդրությանը համապատասխան, որոնց արդյունքներով ընտրված կազմակերպությունները կապահովեն անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը և շինարարական աշխատանքների իրականացումը:

6.2. «Համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, կապի միջոցների և բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցների ձեռքբերում և կապիտալ վերանորոգում».

2024 թվականին համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, կապի միջոցների և բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցների ձեռքբերմանը և կապիտալ վերանորոգմանը նախատեսվում է հատկացնել 2,135.4 մլն դրամ, որը 2023 թվականի նույն ցուցանիշից ավելի է 41%-ով շուրջ 618.7 մլն դրամով: Այս նպատակով նախատեսվող ներդրումները կազմում են Բանկի հիմնական գործունեության ապահովման նպատակով իրականացվող կապիտալ ներդրումների գերակշիռ մասը՝ 73.2%-ը:

Ստորև ներկայացվում են այս ուղղությամբ նախատեսվող առանձին ներդրումների տեսակարար կշիռները նշված հոդվածի գծով ընդամենը ներդրումների կազմում՝

- Ցանցային համակարգի արդիականացման նախագիծ՝ 1,075.4 մլն դրամ. այս հոդվածի գծով ընդամենը ներդրումների 50.4%-ը,
- Գործընթացների նկարագրման և կատարելագործման համակարգի ներդրում՝ 300 մլն դրամ. այս հոդվածի գծով ընդամենը ներդրումների 14.1%-ը,
- Դրամագիտական արժեքների և կանխիկի կառավարման համակարգի ներդրում՝ 47.1 մլն դրամ. այս հոդվածի գծով ընդամենը ներդրումների 2.2%-ը,
- Ձայնային համակարգերի ձեռքբերում և վերազինում՝ 111.3 մլն դրամ. այս հոդվածի գծով ընդամենը ներդրումների 5.2%-ը,
- Սերվերային համակարգերի ծրագրային ապահովում՝ 117.4 մլն դրամ. այս հոդվածի գծով ընդամենը ներդրումների 5.5%-ը:
- Գրասենյակային գույքի ձեռքբերում՝ 85.8 մլն դրամ. այս հոդվածի գծով ընդամենը ներդրումների 4.0%-ը:

- Տեղեկատվական, տեխնիկական անվտանգության ծրագրաապարատային համակարգեր և անվտանգության ապահովման համար անհրաժեշտ հիմնական միջոցներ՝ 86.5 մլն դրամ. այս հոդվածի գծով ընդամենը ներդրումների 4.1%-ը:
- Այլ ներդրումներ ՏՏ, տեղեկատվական անվտանգության և այլ ֆիզիկական ենթակառուցվածքների փոխարիման, զարգացման, արդիականացման, համակարգչային տեխնիկայի և այլ հիմնական միջոցների ձեռքբերման համար՝ 311.8 մլն դրամ կամ այս հոդվածի գծով ընդամենը ներդրումների 15%-ը:

6.3. Տրանսպորտային միջոցների ձեռքբերում.

2024թ. համար Բանկի կողմից նախատեսվում է փոխարինել օգտակար ծառայության ժամկետը լրացած թվով 2 տրանսպորտային միջոց, որոնց ձեռքբերման արժեքը գնահատվում է 48.0 մլն դրամ:

Ամփոփելով վերը նշվածը, գտնում ենք, որ Բանկի կողմից ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի նախագծում ներառելու համար ներկայացված Բանկի խորհրդի 2023 թվականի օգոստոսի 25-ի N 137 Ա և 2023 թվականի սեպտեմբերի 22-ի N 160 Ա որոշումներով հաստատված Բանկի 2024 թվականի վարչական ծախսերի նախահաշիվը և կապիտալ ներդրումների ծրագիրը կազմված են օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ: